ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-38-63-99 ghukasavan.ararat@mta.gov.am;
ghukasavan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 5-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Յայաստանի Յանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

*Համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 6-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1. Ղուկասավան համայնքի 2017թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման մասին

2. Ղուկասավան համայնքի 2017թ. վարչական բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

3. Ղուկասավան համայնքի ավագանու 28.11.2013թ. թիվ 24 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱԺԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-38-63-99 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 6-Ն

## ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

*Համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Ղուկասավան համայնքի 2017թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի
2. Ուժը կորցրած ճանաչել Ղուկասավան համայնքի ավագանու 28.11.2016թ. թիվ 24-Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱԺԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ղուկասավան համայնքի ավագանու 06.02.2017թ.

Թիվ ---6--- -Ն որոշման

Հավելված 1

## 2017թ. ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Ղուկասավան համայնքում սահմանվում են տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակները.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա. հիմնական օբյեկտների համար՝

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ. սույն կետի ,ա' ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

գ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ,աե ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200 000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 60 000 դրամ.

6) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 դրամ:

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,Առևտրի և ծառայությունների մասին« Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար մեկ քառակուսի մետրի համար՝ 350 դրամ՝

8) համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.
գ.բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.
դ. խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.
ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.
զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

9) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա.հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5100դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10100դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15100դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20100 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30100 դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15100 դրամ:

10) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

դ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

11) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.

12) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 դրամ.
13) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500000 դրամ.
14) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու , հաստատելու, ավարտված շինության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց տեղական վճար սահմանել 5000 դրամ:
15) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 դրամ փոխհատուցման վճար:

16) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ, աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 2000 դրամ:
17) Տեղական Ինքնակառավարման մարմինների տնօրինության, օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու, վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական, այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքանակառավարման մարմիների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 2000 դրամ:
18)Համայնքի տարածքում աղբահանության համար սահմանել վճար յուրաքանչյուր բնակչից ամսեկան 20 դրամ:
19) Սույն հավելվածի 1-ին կետով սահմանված դրույքաչափերը հաշվարկվում են 0.5, գործակցի կիրառմամբ:
20) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ 10000 դրամ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-38-63-99 ghukasavan.ararat@mta.gov.am;
ghukasavan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 7-Ն

## 2017թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի 5-րդ կետի պահանջներով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2017թ. վարչական բյուջեով նախատեսված ֆիզիկական անձանց գույքահարկ փոխադրամիջոցներից եկամտատեսակին ավելացնել 450000 դրամ, նույն չափով ավելացնել ծախսերը՝

   1) 01-06-01 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ նախահաշվի՝

   ա. 4241 մասնագիտական ծառայություններ հոդվածին 400000 դրամ,

   բ. 4211 գործառնական և բանկային ծառայություններ հոդվածին 50000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱԶՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱԺԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-38-63-99 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 8-Ն

## ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.11.2013Թ. ԹԻՎ 24 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5 և 7 կետերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ուժը կորցրած ճանաչել Ղուկասավան համայնքի ավագանու թիվ 28.11.2013թ թիվ 24 որոշման *ա* - կետը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽՆԺԱԿՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ